№ 51 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 13 — 1904 — ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 13 № 51

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը պատիւ ունի յայտնելու, որ այսօր, մարտի 13-ին, առաւօտեան ժամը 11½-ին Մողնու ս. Գէորգ եկեղեցում կատարվելու է հանդուցեալ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽՈՒԴԱԴԵԱՆԻ

հոգեհանդիսաը։ 1—1

Նունէ Բուղդանեան և Գէորգ Միքայէլեան Դօլուխանեանց-ը տեղեկացնում են իրանց դժբաղդ որդու՝

ՍԱՇԱ ՄԷԼԻՔ-ՓԱՐՍԱԴԱՆԵԱՆԻ

ազգականներին, ընկերներին և ծանօթներին, որ նրա վաղաժամ մահվան քառասունքի հոգեհանդիսաը տեղի կունենայ Վանքի մայր-եկեղեցում, կիրակի, մարտի 14-ին, ժամի 12-ին, պատարագից յետոյ։ Պատարագի սկիզբը—10½ ժամին։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անգլօ - ֆրանսիական համաձայնութիւն. Զատկի տօնների համար օգնութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վաղվայ ընդհանուր ժողովը. Դատաստանական դահլիճից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Երկրպագուներ։

ԱՆԳԼՕ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

Ահա մի շաբաթ է, որ հեռագիրը տեղեկութիւններ է բերում Անգլիայի և Ֆրանսիայի մէջ կատարվող բանակցութիւնների մասին, որոնց նպատակն է համաձայնութիւն կայացնել մի քանի կարևոր միջազգային հարցերի վերաբերութեամբ։

Այդ բանակցութիւնները սկսվել էին անցեալ տարվանից, բաւական առաջ էին գնացել և մօտեցել էին իրանց վախճանին, երբ յանկարծ Հեռաւոր Արևելքի գործերը այնքան սուր կերպարանք ստացան, որ ծագեց ներկայ պատերազմը։ Կարելի էր կարծել, որ անգլօ-ֆրանսիական բանակցութիւնները կընդհատվեն այդ պատերազմի պատճառով և առաջ կը գան այնպիսի բարդութիւններ, որոնք կը ստիպեն անորոշ ժամանակով յետաձգել համաձայնութեան կայացումը։ Սակայն եւրոպական պետութիւններին այնչողվեց չէզոքութիւն պահպանել և շարունակել իրանց սկսած գործերը։

Անգլիայի և Ֆրանսիայի բանակցութիւնները վերաբերում են Եգիպտոսի, Աֆրիկայի, Հնդկաստանի և Նիւֆաունդլենդի հարցերին։ Համաձայնութեան կէտերը որոշված են արդէն և շուտով կը տան միջազգային վաւերաթղթի նշանակութիւն։

Ֆրանսիան, զիջելով եգիպտական հարցում գերիշխանութեան և բացառիկ ազդեցութեան արտօնութիւններ Անգլիային, աշխատել է վերապահել ֆրանսիական հիմնարկութիւնների և խառն դատարանների գոյութիւնը և եգիպտական պարքի համար նշանակված միջազգային յանձնաժողովի վերահսկութիւնը։

Սահմանվով արտօնեալ և հեղինակաւոր դիրք Եգիպտոսում, Անգլիան թօթափում է իրանից այն անախորժ միջազգային պարտաւորութիւնը, որ ծանրանում էր նրա վրա տարիներից ի վեր, այն է, թողնել Եգիպտոսը, հէնց որ կարգ կը վերահաստատվի երկրի մէջ։ Եւրոպական պետութիւնները մի քանի անգամ յիշեցրել են Անգլիային, որ արդէն հասել է ժամը, որ նոր կեանքի աւետիք ես բերում մի անտես—անճանաչ հայ կնոջ, որի սրտում քո անուշ, վաղուց, շատ վաղուց չը լսած լեզուով, քո զարհուրելի—ցնցող պատմութիւններով, քո աղեխարշ արտասուքով կրկին վառեցիր տարիներ առաջ հանգած ու փոշիացած կրակը։ Երբ քեզ, իբրև անխիղճ վայրենի, իբրև անկարեկից օտար,—և աւելի վատ քան օտարը,—ոտքի հարուածներով դուրս էր անում տանից իմ ամուսինը, երբ դու քո աղաչաւոր հայեացքդ ուղղեցիր իմ աչքերին, օ, ինչպիսի բուռն սատակութեամբ ես զգացի, որ ատում եմ նրան, այդ իմ ամուսնուն, ատում եմ նրա հրպարտ անգթութիւնը, նրա գոռոզ փարթամութիւնը, նրա խորթացած սիրտը դէպի իր ժողովուրդը, նրա լեզուն, որով նա հայհոյում ու նախատում էր քեզ, և ինչպիսի սատակութեամբ զգացի նոյն րոպէին, որ ես քեզ եմ սիրում, քո ժողովուրդը, քո լեզուն, քո տանջանքները, քո ցնցոտիները... Ես զգացի, որ քո և իմ երակների մէջ հոսում է նոյն արիւնը, որ ես պարտական եմ պաշտպանել քեզ նոյն իսկ իմ կեանքի, իմ արեան գնով...

Եւ ես պաշտպանեցի...

Գեղեցիկ օր. դա իմ փրկութեան արշալոյսն էր. ես գտայ նորից իմ դանձը, իմ ինքնուրոյնութիւնը, որ իբրև յիմար վաճառական ծախել էի այնպիսի չնչին գնով այնպիսի չընչին խարեբայի։ Կամքի մի գերբնական ոյժով ես դուրս արի իմ բոլոր երկրպագուներին, որոնք անտարբեր ականատես էին այդ տեսարանին, և նրանց հետ միասին ամենայնիւ, իմ ամուսնուն... Ես փրկված էի...

VII

«Նիցցա. 189*** թ. յունվար։ Այսօր գաղթականին ճանապարհ դրի. նա գնում էր Ամերիկա։ Խեղճ մարդ. ինչպէս տխուր էր, ինչպէս լաց էր լինում՝ յիշելով հեռու հայրենիքը, որից աւելի ևս հեռանում էր դէպի մի խորթ, անծանօթ աշխարհ, լայն ու անսահման փոված ովկիանոսի միւս կողմը, որտեղից, գուցէ, չը կայ այլ ևս դարձի ոչ մի ճանապարհ։ Խեղճ ժողովուրդ. նա ցրվում է, ինչպէս մի ժամանակ Իսրայէլը կործանված Երուսաղէմից...

Ես կանգնած էի ծովափին և երկար նայում էի այն փոքրիկ շոգենաւի ետևից, որ տանում էր գաղթականին յանձնելու մի այլ շոգենաւի։ Նա շարունակ թափ էր տալիս կարմիր թաշկինակը և ինչ որ բան էր աղաղակում։ Արտասուքը գնում էր իմ աչքերից. ես հաղիւ զսպում էի իմ խուլ հեկեկանքը։ Նոր, անծանօթ զգացմունք. ինձ թւում էր, թէ ես բաժանվում էի մի թանգագին եղբօրից, մի սիրելի հարազատից, որին՝ վաղուց կորցրած՝ նոր էի գտել։ Այդ մարդը, հնոտիների մէջ փաթաթված այդ ողորմելին, որ հայրենիքի մէջ թողել է տխուր յիշատակներ միայն և իր հարկադրական փախուստի ժամանակ այսուամենայնիւ միշտ յետ ու յետ է նայում՝ նրանց չը մոռանալու երկիւղով, դառն մտքեր զարթեցրեց իմ մէջ։ Իր փախուստի օրերում անգամ նա հազար անգամ բարձր է ինձանից։ Եգիպտոսից հեռանալու ժամը, բայց Անգլիան իր շահերի համար այլ ևս անկարելի է համարում Եգիպտոսը թողնելը և ջանք է գործ դնում առ միշտ հաստատվելու այդ կարևոր տեղում, որով նա իշխում է Սուէզի ջրանցքի և Նեղոսի շրջանի վրա, ազդեցութիւն ձեռք բերելով Աֆրիկայի հիւսիս-արևելքի մասում։

Անգլիան իր կողմից զիջում է Ֆրանսիային մի քանի այնպիսի հողեր արևելեան Աֆրիկայի շրջանում, որոնք խանգարում են ֆրանսիական տիրապետութիւնների շրջանագծի ամբողջութեան և ճանաչում է Ֆրանսիայի գերակշռող ազդեցութիւնը Մարօկկոի որոշ մասերի վերաբերութեամբ։ Ինչ վերաբերում է Նիւֆաունդլենդի և հնդկական (Սիամի շրջանի) գործերին, նրանք մեր ընթերցողների համար չունեն առանձին հետաքրքրութիւն, թէև այդ պետութիւնների շահերի տեսակէտով ունեն կարևոր նշանակութիւն։

Անգլօ-ֆրանսիական համաձայնութեան աջող ելքը միջազգային հայեացակէտով մխիթարական մի երևոյթ է, որովհետև նա ապացոյց է, որ պետութիւնները առանց պատերազմի, առանց արիւն թափելու և զրկանքներ պատճառելու միմեանց, կարող են որոշ համաձայնութիւնների գալ, յարդելով փոխադարձապէս միմեանց շահերը։

ԶԱՏԿԻ ՏՕՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՕԳՆՈՒԹԻՒՆ

Մենք ամէն տարի յիշեցրել ենք մեր հասարակութեան այն չքաւորների և կարօտեալների մասին, որոնք շաբաթներ և ամիսներ շարունակ սպասում են որ և է օգնութեան, մխիթարութեան և որոնք կարողութիւն չունեն նոյն իսկ մեծ տօներին փոքր ի շատէ մեղմացնելու իրանց ծանր կարիքի չափազանց տխուր և սուր արտայայտութիւնը։

Ամէն տարի մենք հնարաւորութիւն ենք ունեցել մեր խմբագրութեան մէջ հաւաքված գումարներով մասնաւոր նպաստներ հասցնել Զրօրհնէքի և Զատկի տօների օրերը շատ կարօտեալների, որոնք ուրիշ ժամանակ նոյն իսկ չեն վրատահանում նպաստ խնդրել, համարելով դրան մուրացկանութիւն, որից նրանք քաշվում են, գտնելով այդ իրանց համար վիրաւորական։

Մենք այս տարվայ Զրօրհնէքին չը կարողացանք նպաստներ բաժանել և մեր ստացած մի քանի նուէրները բաժանեցինք սահմանափակ թուով, կարօտեալների աչքի առաջ ունենալով նրանց մեծ կարիքները։ Միւսներին ստիպված էինք մերժել և յայտնել, որ նպաստներ պէտք է բաժանենք Զատկի տօներին, եթէ կը լինեն նուիրատուութիւններ։

Հասարակութիւնը թող յիշէ իր կարօտեալներին և օգնէ նրանց կամ անմիջական օժանդակութեամբ և կամ ուղարկելով գումարները բարեգործական հաստատութիւններին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԱՂՎԱՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Հայոց դրամատիկական ընկերութեան վարչութիւնը վաղը, մարտի 14-ին, արտակարգ ընդհանուր ժողով է նշանակել։ Ժողովի օրակարգի հարցերի թւում մենք գտնում ենք և այս կէտը. «առաջիկայ սեզօնին մշտական խումբ հրաւիրելու հնարաւորութեան հարցը»։

Այս հարցը, որի լուսաբանութեան կարող է ծառայել վարչութեան հաշիւը նոր վերջացող սեզօնի մասին, 7000 ռուբլի դեֆիցիտով, պարզ ցոյց է տալիս, որ հայոց մշտական բեմի գոյութիւնը գտնէ ժամանակաւորապէս վտանգված է, հետևաբար, առաջիկայ ընդհանուր ժողովը կոչված է միջոցներ խորհելու՝ այդ վերահաս վտանգի առաջն առնելու համար։

Եթէ 7000 ռուբլի դեֆիցիտի վրա աւելացնենք և առաջին տարվայ մօտ 5000 ր. դեֆիցիտը, մենք կը տեսնենք որ առնուազն 10—12,000 ռուբլի դեֆիցիտ կայ հանդցնելու։ Այդ իրողութիւնը և առաջ է բերել վարչութեան կողմից այս հարցը. «հնարաւորութիւն կայ շարունակել մշտական խումբ և բեմ ունենալը»։

Ընդհանուր ժողովը պէտք է պատասխանէ այդ հարցին և նրա պատասխանից կախված կը լինի առաջիկայ սեզօնին Թիֆլիսում հայոց մշտական բեմ ունենալու հնարաւորութիւնը։

Հարցը դրված է հրապարակի վրա. նա հասարակական հարց է և կարևոր, որովհետև նա շօշափում է թէ, ընդհանրապէս, գեղարուեստի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԿՐՊԱԳՈՒՆԵՐ

VI

«Նիցցա. 189***, յունվար։ Հազիւ մի քանի շաբաթ է անցել այն օրից, երբ ես գրեցի յիշատակարանիս վերջին տողերը. բայց այդ կարճ ժամանակամիջոցում որքան կեանք սահեց, որքան դէպքեր ու անցքեր եկան ու անցան... Վերջապէս։ Ես արդէն սկսել էի յուսահատվել, կարծում էի, որ անդարձ կորած եմ, որ այլ ևս ելք չը կայ այն անդունդից, ուր գլորել էր ինձ բաղդի հուժկու բազուկը. ես լալիս էի, անքուն գիշերներ լուսացնում, բաժանված երկու անձի՝ ահեղ պատերազմ էի մղում ինքս իմ դէմ. անշուշտ ես հեռու չէի խելագարութիւնից... Կարել միանգամից այն բիւրաւոր կապերը, որոնցով կաշկանդված է մարդ իր անցեալի, իր արդէն սարքված ու յարդարված կեանքի հետ,—օ, ինչպիսի անտանելի, հոգեմաշ տանջանք է այդ. ինձ թւում էր, որ ես ընդմիշտ էլ կը մնամ ճնշված այդ տանջանքների ծանր բեռան տակ, ինչպէս մնում են հաղարաւոր ինձ նմանները։ Սակայն փրկութիւնը աւելի մօտիկ էր, քան ես կարծում էի...

Խեղճ հայ գաղթական, երբ տարապայման բաղդի ալիքները հանեցին քեզ Միջերկրականի այս անծանօթ ափերը, կարող էիր երևակայել, որ նոր կեանքի աւետիք ես բերում մի անտես—անճանաչ հայ կնոջ, որի սրտում քո անուշ, վաղուց, շատ վաղուց չը լսած լեզուով, քո զարհուրելի—ցնցող պատմութիւններով, քո աղեխարշ արտասուքով կրկին վառեցիր տարիներ առաջ հանգած ու փոշիացած կրակը։ Երբ քեզ, իբրև անխիղճ վայրենի, իբրև անկարեկից օտար,—և աւելի վատ քան օտարը,—ոտքի հարուածներով դուրս էր անում տանից իմ ամուսինը, երբ դու քո աղաչաւոր հայեացքդ ուղղեցիր իմ աչքերին, օ, ինչպիսի բուռն սատակութեամբ ես զգացի, որ ատում եմ նրան, այդ իմ ամուսնուն, ատում եմ նրա հրպարտ անգթութիւնը, նրա գոռոզ փարթամութիւնը, նրա խորթացած սիրտը դէպի իր ժողովուրդը, նրա լեզուն, որով նա հայհոյում ու նախատում էր քեզ, և ինչպիսի սատակութեամբ զգացի նոյն րոպէին, որ ես քեզ եմ սիրում, քո ժողովուրդը, քո լեզուն, քո տանջանքները, քո ցնցոտիները... Ես զգացի, որ քո և իմ երակների մէջ հոսում է նոյն արիւնը, որ ես պարտական եմ պաշտպանել քեզ նոյն իսկ իմ կեանքի, իմ արեան գնով...

Եւ ես պաշտպանեցի...

Գեղեցիկ օր. դա իմ փրկութեան արշալոյսն էր. ես գտայ նորից իմ դանձը, իմ ինքնուրոյնութիւնը, որ իբրև յիմար վաճառական ծախել էի այնպիսի չնչին գնով այնպիսի չընչին խարեբայի։ Կամքի մի գերբնական ոյժով ես դուրս արի իմ բոլոր երկրպագուներին, որոնք անտարբեր ականատես էին այդ տեսարանին, և նրանց հետ միասին ամենայնիւ, իմ ամուսնուն... Ես փրկված էի...

VII

«Նիցցա. 189*** թ. յունվար։ Այսօր գաղթականին ճանապարհ դրի. նա գնում էր Ամերիկա։ Խեղճ մարդ. ինչպէս տխուր էր, ինչպէս լաց էր լինում՝ յիշելով հեռու հայրենիքը, որից աւելի ևս հեռանում էր դէպի մի խորթ, անծանօթ աշխարհ, լայն ու անսահման փոված ովկիանոսի միւս կողմը, որտեղից, գուցէ, չը կայ այլ ևս դարձի ոչ մի ճանապարհ։ Խեղճ ժողովուրդ. նա ցրվում է, ինչպէս մի ժամանակ Իսրայէլը կործանված Երուսաղէմից...

Ես կանգնած էի ծովափին և երկար նայում էի այն փոքրիկ շոգենաւի ետևից, որ տանում էր գաղթականին յանձնելու մի այլ շոգենաւի։ Նա շարունակ թափ էր տալիս կարմիր թաշկինակը և ինչ որ բան էր աղաղակում։ Արտասուքը գնում էր իմ աչքերից. ես հաղիւ զսպում էի իմ խուլ հեկեկանքը։ Նոր, անծանօթ զգացմունք. ինձ թւում էր, թէ ես բաժանվում էի մի թանգագին եղբօրից, մի սիրելի հարազատից, որին՝ վաղուց կորցրած՝ նոր էի գտել։ Այդ մարդը, հնոտիների մէջ փաթաթված այդ ողորմելին, որ հայրենիքի մէջ թողել է տխուր յիշատակներ միայն և իր հարկադրական փախուստի ժամանակ այսուամենայնիւ միշտ յետ ու յետ է նայում՝ նրանց չը մոռանալու երկիւղով, դառն մտքեր զարթեցրեց իմ մէջ։ Իր փախուստի օրերում անգամ նա հազար անգամ բարձր է ինձանից։ Ի՞նձ ինչ թէ կան տխուր յիշատակներ, կայ անբաղդ ժողովուրդ, կայ մոռացվող ու անհետացող լեզու. ես վաղուց մոռացել եմ և հայրենիք և ամէն հոգս ու մտածմունք նրա մասին։ Ինձ թւում էր, որ Միջերկրականի այս գեղեցիկ ափերից զատ՝ պէտք չէ որոնել ուրիշ հայրենիք և ոչ այս փարթամ, հնչուն լեզուից զատ՝ ուրիշ խօսք ու լեզու։ Բայց նա... նա չէր կարողանում մոռանալ հայրենի գերեզմաններն անգամ. նա գնում էր օտար աշխարհ՝ այդ գերեզմանների մօտ ձգած և՛ սիրտն և հոգին...

...Ես նստած եմ հիմա լեռնալանջին կպած մի սիրուն տնակի պատշգամբի վրա. չը նայելով ձմեռվայ կիսին՝ չորս կողմս գարուն է ծաղկում. բաց-կարմրաւուն վարդեր՝ փաթաթված պատշգամբի սիւներից՝ սողում, բարձրանում են դէպի վեր և ապա յետ դառնալով կախվում են գլխիվայր ու չարաճճի նենգութեամբ ժպտում ինձ վերևից. մի կամակոր ոստիկ դուրս է հանել երկաթեայ թելերի կապանքից իր փոքրիկ, կանաչ, նուրբ աղուամազով ծածկված թաթիկները և մի նոր բաց կոկոն մեկնել դէպի իմ գրասեղանը։ Հարևան այգու մէջ բացվել են նշենիներն, և յայսմիկն ու շեփորուկը իրանց արբեցուցիչ բուրմունքը տարածել չորս կողմը։ Նիցցան թաղված ամբողջովին կանաչի ու ծաղիկների մէջ՝ գուրգուրում ու փայփայում է իրան ի։ առաջ. մեղմ, անոյշ հով է փչում ծովափից։ Միշտ գեղեցիկ, միշտ ուրախ աշխարհ։

Պատշգամբիս առաջ, պարտէզի մէջ, ուր նամ

և թէ, մանաւորապէս, հայ թատրոնի գոյութիւնը։

Մամուլը, որ այդպիսի դէպքերում, միշտ իր պարտականութիւնն է համարել նպաստել հարցի կանոնաւոր և անաչառ լուսաբանութեան ու լուծման, այս անգամ էլ չէ կարող լռել ու արծարծված հարցը չենթարկել բազմակողմանի քննութեան և դրանով միջոց տալ ընկերութեան՝ խնդիրը հիմնաւոր հողի վրա դնել ու արմատական միջոցներ որոնել հայոց բեմի գոյութիւնը Թիֆլիսում միանգամայն ընդմիշտ ապահովելու համար։

Հայոց դրամատիկական ընկերութիւնը հիմնված է, համաձայն իր հաստատված կանոնադրութեան, պահելու հայկական բեմ Թիֆլիսում և նրա նահանգի միւս տեղերում ու նը-պաստել դրամատիկական արուեստի զարգացման։ Լինելով դեռ նոր և մատաղ հաստատութիւն, ունենալով հազիւ երկամեայ գոյութիւն, նա, անկասկած, իբրև ամեն մի նոր և մատաղ հաստատութիւն, պէտք է ընթանար դողդոջուն, վեհերոտ քայլերով։ Որքան էլ նրա գործունէութեան շրջանը սահմանափակված է Թիֆլիսի նահանգով, բայց գործելու համար դարձեալ բաւական լայն ասպարէզ կայ նրա առաջ—կազմել լաւ բէպերտուար, հիմնել թատրոններ Թիֆլիսում, Ախալցխայում, Ախալքալաքում և մի քանի այլ հայաբնակ կէտերում—սա, արդէն, ինքն ըստ ինքեան ահագին գործ է։ Միանգամից այդ ամենը կատարելը՝ անհնարին էր, ուստի և ընկերութիւնը սկսեց իր գործունէութիւնը նրանով, որ աշխատեց հիմնել և պահպանել Թիֆլիսում հայոց մշտական բեմ, թողնելով մի կողմ առ այժմ մշտական խումբ ունենալու և այդ խումբը նահանգի միւս քաղաքներ, ուղարկելու և այնտեղ ևս ներկայացումներ կազմակերպելու ծրագիրը։

Եւ խելացիութիւն էր նրա արածը. այդ էր ուղիղ ճանապարհը, որ նա բռնեց։

Բայց ինչու նա հասաւ բացասական հետեւանքների, քանի որ ուղիղ էր բռնած ճանապարհը. ինչու երկու սեզոնի ընթացքում նա ունեցաւ այնպիսի մի դէֆիցիտ, որ այսօր, ստիպում է նրան հարց դնել «շարունակել իր գոյութիւնը, թէ ոչ», որովհետև, թող ներվի մեզ ասել, որ այդ հարցից կախված է և իր ընկերութեան գոյութիւնը այն պարզ պատճառով, որ ընկերութեան գոյութեան միակ raison d'être-ը՝ հայ մշտական բեմ ունենալն է։

Նա հասաւ բացասական հետևանքների այն պատճառով, որ իր գործունէութեան եղանակը սխալ ընտրեց. նա հասկացել էր թէ ինչ ճանապարհ պէտք է բռնել նպատակին հասնելու համար, բայց շնորհիւ իր անփորձութեան, շնորհիւ անցեալի փորձառութեան բացակայութեան, նա բռնեց ոչ թէ ուղիղ, այլ ծուռ ճանապարհ. փոխանակ ուղիղ գծով գնալու, որ ամենակարճն է, նա դիմեց ոլորապտուտ գծերի, որոնք թողեցին նրան կէս ճանապարհի վրա։ Այժմ, դառն փորձը կը ստիպի նրան դառնալ դէպի ուղիղ ճանապարհը և դա կը լինի նրա փրկութիւնը. դա միջոց հնարաւորութիւն կը տայ նրան ապահովել հայ մշտական բեմի գոյութիւնը և դրանով ևս ապահովել իր գոյութիւնը։

«Expérience corrige»—փորձառութիւնը ուղղում է—ասում են ֆրանսիացիները և 12,000 բուբլիանոց փորձառութիւնը բաւական լաւ պէտք է ուղղէ ընկերութեան վարչութիւնը։

Տեսնենք այժմ որն էր ընկերութեան գործած սխալը և բռնած ծուռ ճանապարհը. տեսնենք ինչու նա, իրան ուղիղ նպատակ դնելով, այդ նպատակին հասնելու համար գործունէութեան սխալ եղանակ ընտրեց։

Բայց այդ մասին վաղը։

Հ. Ա.

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻ

(Հայկական եկեղեցուն պատկանող կալուածքների դատաստանական պաշտպանութեան իրաւունքի հարցի վերաբերմամբ, 1903 թւի յունիսի 12-ի նոր օրէնքի հրատարակութիւնից յետոյ։)

Ներկայ մարտի 10-ին, Թիֆլիսի դատաստանական պալատի 2-դ քաղաքացիական դէպարտամէնտը, կազմված՝ դատաստանական պալատի դէպարտամէնտի նախագահ Ն. Պ. Սմիտտէնից, անդամներ Ի. Ս. Պօղոսեակովից և Ա. Պ. Բուտէնկօից և մասնակցութեամբ պրոկուրորի օգնական Ա. Աղիգեօղլովի, լսեց Վրաստանի և Իմէրէթի հայ-լուսաւորչական թեմական կոնսիստորիայի հաւատարմատար երդուեալ հաւատարմատար Ս. Ս. Մէլիք-Ադամեանի մանաւոր գանգատը Թիֆլիսի նահանգական դատարանի 1903 թւի նոյեմբերի 26-ի որոշման դէմ, կոնսիստորիայի դատի առիթով Նիկողայոս Գրիբոյեդովի հետն դրամների մասին, ըստ պարտաւորութեան։

1903 թւի նոյեմբերի 26-ին երդուեալ հաւատարմատար Մէլիք-Ադամեանը կանչված էր Թիֆլիսի նահանգական դատարանի նիստը՝ լսելու վերոյիշեալ գործը, որպէս հայոց կոնսիստորիայի հաւատարմատար, սակայն նահանգական դատարանը, ի նկատի ունենալով գանձարանի ներկայացուցիչ տիտուլեարնի սովետնիկ Սօկոլովի գալը դատարանի նիստին, եկեղեցու շահերը պաշտպանելու համար, չը թոյլ տուեց Մէլիք-Ադամեանցին պաշտպանել վերոյիշեալ գործը, անվաւեր և ոյժը կորցրած համարելով կոնսիստորիայի նրան տուած լիազորութիւնը, Մինիստրների Կոմիտէի 1903 թւի յունիսի 12-ի Բարձրագոյն հաստատված կանոնադրութեան հիման վրա, որով եկեղեցական կալուածքներն անցնում են արքունական վարչութիւնների տեսչութեան տակ։

Իր մանաւոր գանգատի մէջ Մէլիք-Ադամեանը նահանգական դատարանի այդ որոշումը անկանոն համարելով, բացատրեց, որ 1903 թւի յունիսի 12-ի օրէնքով հայոց կոնսիստորիաներից ոչ միայն չէ խլված դատաստանական պաշտպանութեան իրաւունքը, այլ ընդհակառակը, այդ իրաւունքը յատկացրված է նրան, տալով նրան իրան պատկանող կալուածքների սեփականութեան իրաւունքը։ Վերոյիշեալ օրէնքով եկեղեցու իրաւունքը սահմանափակված է միայն նրան պատկանող կալուածքների կառավարելու և հսկելու տեսակէտից, և այդ իրաւունքը տրված է արքունական վարչութիւններին, բայց այդ ամենևին չէ նշանակում, որ հայոց եկեղեցին, որպէս սեփականատէր, կարող է զրկված լինել դատարանում իր շահերը պաշտպանելու իրաւունքից և, այդպիսով, իրագործել սեփականութեան հէնց այն իրաւունքը, որ նրան վերապահել է հէնց ինքն օրէնքը։

Ներկայ դէպքում կոնսիստորիան, որպէս եկեղեցու շահերի ներկայացուցիչ, շարունակում է գոյութիւն ունենալ և գործել օրինական հիմքով, և այդ պատճառով խօսք անգամ չէ կարող լինել եկեղեցու իրաւունքները պաշտպանելու համար նրա տուած լիազօրութեան դադարման մասին։ Իրագործելով եկեղեցական գործերի դատաստանական պաշտպանութեան իրան պատկանող իրաւունքը, կոնսիստորիան ոչ միայն ոչնչով չէ խեղդում արքունական այն վարչութիւնների իրաւունքները, որոնք կոչված են կառավարելու եկեղեցական կալուածքները, այլ մինչև անգամ թեթևացնում է այդ վարչութիւնների գործը նրանով, որ որպէս սեփականատէր և գործի մէջ շահագրգռված անձն, աջակցում է, որպէս չի ճանաչվին և ամրացվին եկեղեցու կալուածական իրաւունքները. այդպիսով ձեռք է բերում հէնց այն կալուածքը որը դրանից յետոյ, պէտք է յանձնվի արքունական վարչութիւնների տեսչութեանը։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ մինչև վիճելի կալուածքը չէ յատկացրված եկեղեցուն և վերջինս չէ ձեռք բերել նրան, չի լինի և այն կալուածքը, որ պէտք է յանձնվի արքունական վարչութիւնների տեսչութեանը, մանաւանդ որ 1903 թւի յունիսի 12-ի օրէնքով, արքունական վարչութիւններին պէտք է յանձնվին միայն եկեղեցական անշարժ կալուածքները և դրամագլուխները, և ոչ թէ վերջինի իրաւունքները վիճելի գոյքերի վերաբերմամբ, որոնք դեռ պէտք է օրէնքի սանկցիա ստանան, պատշաճաւոր դատաստանական կարգով։

Այդպիսով, ակներև է, որ իւրաքանչիւր վիճելի գործի մէջ, ուր եկեղեցու շահերն են շօշափվում, նախ և առաջ ինքն եկեղեցին, որպէս սեփականատէր, շահագրգռված է իր իրաւունքի պաշտպանութեան մէջ, և դատաստանական պաշտպանութեան նրա իրաւունքը չը ճանաչելը հաւասարազօր կը լինէր նրա սեփականութեան բացասման։ Սակայն, անկախ դրանից, արքունական վարչութիւնը, շատ դէպքերում չէ էլ կարող իրագործել դատաստանական պաշտպանութեան իրաւունքը եկեղեցական գործերի վերաբերմամբ, որովհետև դատաստանական հիմնարկութիւններում քննվում են այնպիսի գործեր, որոնք վիճելի են հայոց եկեղեցու և զանազան արքունական վարչութիւնների միջև, ըստ պատշաճաւոր մինիստրութիւնների—պետական կալուածքների, ժողովրդական լուսաւորութեան և ուրիշների, այսինքն հէնց այն արքունական վարչութիւնների, որոնց ձեռքում, նոր օրէնքով, կենտրոնացած է եկեղեցական կալուածքների վարչութիւնը։ Այդ դէպքերում, եկեղեցու դատաստանական պաշտպանութեան իրաւունքը բացասելով, արքունական վարչութիւնը գործած կը լինէր միաժամանակ պահանջատէրի և պատասխանատուի դերում, որը, ի հարկէ, անհնարին կը լինէր թոյլ տալ օրէնքով։

Վերոյիշեալ գանգատի դէմ գանձարանի լիազօր Սօկոլով տուեց գրաւոր բացատրութիւն, որի մէջ ասում է, որ հայ լուսաւորչական եկեղեցին, որպէս սեփականատէր այն բոլոր կալուածքների, որոնք նշանակված են այդ դաւանութեան հոգևոր հաստատութիւնների պահպանութեան համար, իրան պատկանող իրաւունքները ինքն չէ կարող արտայայտել և այն բոլոր գործողութիւնները կատարելու համար, որոնք անհրաժեշտ են նրա իրաւունքները իրագործելու համար կալուածքների վերաբերմամբ, կարիք ունեն առանձին օրգանների—ներկայացուցիչների, որոնք և սահմանվում են օրէնքով։ Երբ եկեղեցական կալուածքները հոգևոր հաստատութիւնների վարչութեան տակ էին, այն ժամանակ օրէնքը ընդունում էր այդ հաստատութիւնները որպէս եկեղեցու սեփականատէրի ներկայացուցիչներ նրա բոլոր գոյքերի վերաբերմամբ։ Իսկ այժմ, նոր օրէնքով գոյքերի մի որոշ խումբ հայ-լուսաւորչական դաւանութեան կարգադրութիւնից հանելուց և պատշաճաւոր մինիստրութիւնների տեսչութեան և վարչութեան յանձնելուց յետոյ,—հոգևոր հաստատութիւնները, այլ ևս ոչինչ առնչութիւն չունենալով դէպի այդ կալուածքների վարչութիւնը, ակներև է, որ կորցրել են բոլոր նախկին պարտաւորութիւնները նրանց վերաբերմամբ։

Դատաստանական պալատը համաձայնվեց երդուեալ-հաւատարմատար Ս. Մէլիք-Ադամեանի պատճառաբանութիւնների հետ և ընդունեց, որ հայ լուսաւորչական կոնսիստորիաները նոր օրէնքով զրկված չեն դատաստանական պաշտպանութեան իրաւունքից հայոց եկեղեցու կալուածական շահերին վերաբերող գործերում։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայրաքաղաքի լրագիրների ասելով, Պետերբուրգի շրջակայքում մի քանի ծովափնեայ ամարանոցներում տարածվել են այնպիսի լուրեր, որոնք երկիւղ են ազդել ամարանոց վարձողներին և վարձու տուողներին։ Այդ լուրերը վերաբերում են ներկայ պատերազմի հետ իբր թէ կապ ունեցող՝ ծովափնեայ տեղերի ռմբակոծութեանը։ Պետերբուրգի նահանգապետը հրամայել է իր իշխանութեան տակ գտնված ոստիկանութեան յայտարարել ժողովրդին որ այդ տարածված լուրերը բացարձակ սուտ են։

Պետերբուրգի գիտութիւնների ակադեմիան արժանացրել է իր փոքր մրցանակին Գեղի մէջքով մի արմաւենի բարձրացել ու փռել է իր հով ստուերը մշտադալար թուփերի ու ճանապարհի վրա, անհոգ խաղում է ծանօթ անգլուհին—սպիտակահեր, կապուտաչեայ, միշտ աշխոյժ ու զուարթ փոքրիկը—մի գեղեցիկ հրեշտակ՝ ծաղկած հիւսիսի մշուշների մէջ։ Փոքրիկ խորամանկը հացի փշրանքներ է գցում աւազանի մէջ և հրապուրում կարասներին—նա շատ է սիրում իր փոքրիկ թաթիկներով շոյել նրանց սիրուն գլուխներն և երկայն ձիւնափայլ պարանոցները։ Նրա մայրը, մի բարձրահասակ, գեղանի լէդի, գիրքը ձեռքին, նստած է ստուերի մէջ և երբեմն երբեմն հազիւ նշմարելի ժպիտով նայում է իր փոքրիկին։ Ահա փողոցով անցաւ ամերիկացի տղամարդկանց ու կանանց մի ստուար խումբ. նրանք վերադառնում են առաւօտեան զբօսանքից, ուրախ ծիծաղում ու խօսում են ամենքը, ձիերը համարձակ, մեծ քայլերով ու բարձրաձայն դոփիւնով սլանում, առաջ են վազում։ Գերմանացի պրոֆէսօրը՝ այդ սիրելի հիւանդոտ ծերուկը՝ անշուշտ վերջացրեց առաւօտեան պարապմունքը, որից չեն կարող բաժանել նրան աշխարհիս բոլոր բժիշկները, և ջութակը ձեռքին դուրս եկաւ հարևան պատշգամբը. ծերացած բազուկն ու մատները շարժվեցին զարմանալի արագութեամբ և տարածեցին չորս կողմը երիտասարդական սիրոյ, վառ երազների ու երջանկութեան ուրախ, ներդաշնակ նուագներ։ Սպիտակահեր խորամանկը, ինձ հետ պատահելիս, միշտ հաւատացնում է, որ իր սիրային նուագները «հայ գեղեցկուհուն» են նուիրված։ Բարի, սիրելի ծերուկ, նրա և նուագներն, և մտածմունքներն, և պարապմունքը,—ես գիտեմ,—նուիրված են իր աշակերտներին, իր ընտանիքին, իր հայրենիքին, որոնց կարօտը այնպէս քաշում է, բայց և այնպէս միշտ ուրախ է, միշտ աշխոյժ, միշտ մի քաղցր խօսք ունի շրթունքների վրա ուրիշի համար, չը նայելով որ մի ոտքն արդէն գերեզմանումն է և միւսը—այդ նա շատ լաւ գիտէ,—շուտով կընկերանայ առաջինին։ Ուրախ են, այո, ուրախ են այստեղ ամենքը, և խոր կապուտակ երկինքը, և անսահման խաղաղիկ ծովը, և նրա մշտադալար ծաղկուն ափերը և մարդիկ՝ ժողովված աշխարհի բոլոր կողմերից՝ վայելելու ձմեռվայ կիսին գարնան հրաշալիքները։ Եւ թւում է ինձ, որ նրանք բոլորն էլ իրաւունք ունեն ուրախանալու, բոլորը, բոլորը... Եւ միայն ինձ վիճակված չէ այժմ մասնակից լինել նրանց ուրախութեանը... Գաղթականի դէմքը՝ տխուր, արտասուալից՝ թէև օրեր, շաբաթներ անցան նրա մեկնելուց յետոյ, միշտ կանգնած է իմ առաջ, և ես, տանը թէ դուրսը, միշտ նրան եմ տեսնում, միշտ նրա պատմութիւններն եմ լսում։ Եւ գիշերային խաւարում, երբ ամեն ինչ հանդչում է չորս կողմս խորին լռութեան մէջ, երբ բորբոքված միտքս թռչում է հեռու, հեռու այստեղից,—երերուն, աղերսաւոր ուրուականներ բարձրանում են գերեզմաններից ու կանչում են ինձ խուլ, խեղդված հառաչով...

...Լուռ, անձայն ես այժմ հայեացքս ուղղել եմ ծովին, որ այնպէս լայն ու արձակ փռված է իմ առաջ կէսօրեան բարկ արևի ճառագայթների տակ. ինչպէս մի հսկայական ոսկեայ հայելի, նա փայլում ու պսպղում է և հանդարտ օրօրում իր զարդարուն կուրծքը։ Հեռու՝ դէպի ձախ, ուր մի դալարագեղ հրուանդան համարձակ ձգվել է ծովի խորքերը, խիզախօրէն ճեղքում է ալիքներն ու առաջ սլանում հազիւ նշմարելի մի շղթանաւ։ Վաղուց է ես նայում եմ նրան. իբրև մի ջրասոյզ հաւալուսն, արդէն նա կամաց-կամաց չքանում է իմ աչքից և ես տեսնում եմ այժմ միայն նրա խողովակների թեթև, թափանցիկ ծուխը, որ մի բօպէ թափառելով ջրերի վրա, ցրւում, անյայտանում է անհուն կապուտութեան մէջ։ Ո՞ւր է գնում արդեօք նա, դէպի իտալական ափերը, դէպի Աֆրիկա, Յունաստան, թէ գուցէ դէպի մի երկիր, ուր թռչում են և իմ միտքն ու հոգին...

«Նիցցա. փետրվար. 189**։ Երէկ, երբ ես դուրս էի եկել փողոց մի քանի իրեր գնելու ճանապարհի համար, ծովափում արմաւենիների ծառուղու վրա, պատահեցի իմ նախկին երկրպագուներից մի քանիսին, պատահեցի քիչ յետոյ նաև իմ ամուսնուն՝ թէև թեւի տուած մի երիտասարդ ֆրանսուհու հետ։ Նրանք տաքտաք խօսակցում էին և, ըստ երևոյթին, շատ գոհ էին իրարից։ Զարմանալի չէ, խանդի կամ բարկութեան ոչ մի նշոյլ անգամ չը զարթեց իմ մէջ, չը նայելով, որ իմ պատուելի նախկին ամուսինը նամակներով արդէն զինել է իմ դէմ իմ բոլոր ազգականներին, ծանօթներին և նոյն իսկ ծնողներին։ Ես գիտեմ, որ իմ հայրենի քաղաքում բարեկամական ընդունելութիւն չէ սպասում ինձ, բայց այդ ոչինչ. դա ինձ չէ վախեցնում. ես իմ մէջ բաւական ոյժ կը գտնեմ դիմադրելու ամեն մի արգելքի։ Ոչ մի վերադարձ դէպի անցեալը, որքան էլ ծնողներս աշխատէին. այդ անցեալն ես ամուրամուր կը թաղեմ և դուրս կը ձգեմ սրտիցս ամեն ինչ, որ կապված էր նրա հետ։ Ինձ նոյն իսկ այսօր թուաց, որ ես վաղուց, շատ վաղուց պատահմամբ հանդիպել եմ այդ մարդուն, որ մի ժամանակ իմ ամուսնու անունն էր կրում, և նոյնքան վաղուց մոռացել եմ նրան։

Մի ժամից յետոյ ես ճանապարհ կընկնեմ այստեղից. մի հեռու աշխարհ բռնի քաշում է ինձ դէպ ինքը։ Մնաք բարով, երկրպագուներ, մնաս բարով, ամուսին, պատահական ծանօթ, մնաք բարով, գեղանկար ծովափեր. դէպի ձեզ, ես այլ ևս չեմ վերադառնայ. առանց ձեզ էլ ես կը ստեղծեմ իմ երջանկութիւնը։ Դառն փորձերից խրատված՝ ես կաշխատեմ գտնել ուրիշ, ճ ուրիշ երկրպագուներ»...

Գեղեցիկ հարևանուհուս յիշատակարանը այստեղ վերջանում էր։ Բացի այս կցկտուր հատուածներից՝ նրա մէջ, զանազան երեսների վրա, ցրուած էին հայերէն բառեր ու դարձուածներ։ Երևում էր, որ տիկին Տէրոյեանը, հայրենիք վերադառնալուց յետոյ, սկսել էր ուսումնասիրել իր մայրենի լեզուն։ Տիկինը քաղաքում չէր և ոչ ոք չը կարողացաւ ասել ինձ նրա հասցէն։ Փոքրիկ ծոցատետրը ես խնամքով պահեցի ինձ մօտ՝ յուսալով մի օր վերադարձնել նրան տիրոջը։

(Կը շարունակվի)

(1,500 ռուբլի) հանգուցեալ բժշկապետ Առաստամեանի «Զկան թոյնի մասին» աշխատութիւնը։

—

Մարտի 11-ին Թիֆլիսի Արտիստական ընկերութեան թատրոնում մի խումբ հայ դերասաններ, մեծ մասը հայոց դրամատիկական դերասանական խմբից, ներկայացրին «Կեանքի արժէքը» դրաման և «Ծերունին զուարճանում է» վոդեվիլը։ Դերակատարները բոլորին ծանօթ մարդիկ են։ Աչքի էին ընկնում իրանց մտածված խաղով պ.պ. Պետրոսեանը, Վրոյրը, Աւետեանը, Ալիխանեանը և օրիորդ Խիթարեանը։ Մնացածների մասին կարելի է ասել, որ չը փչացրին։ Թատրոնը դատարկ էր, բաւական դատարկ, չը նայելով, որ ամբողջ Մեծ պասի ընթացքում այս առաջին ներկայացումն էր Արտիստական ընկերութեան թատրոնում։

—

Երկրագործութեան մինիստրութիւնը Պետական Խորհրդի քննութեանն է ներկայացրել իր մշակած մի ծրագիրը երկրագործական դպրոցների մասին։ Այդ նոր ծրագրով, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, թոյլ է տրվում մասնաւոր անձանց բանալ երկրագործական դպրոցներ, նոյնպէս և մեղուաբուծական ու բանջարաբուծական ուսումնարաններ։ Ծրագիրը պարզ և որոշ կերպով գծում է գիւղատնտեսական հանրագիտական կուրսերի կազմը ևս։

—

Ներկայումս Պետերբուրգից մինչև Իրկուտսկ նոր հեռագրական թել է անցկացնվում։ Այդ գծի բոլոր աշխատանքները վերջանալու են ապրիլ ամսում։

—

«Тер. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ Վլադիկավկազի երկաթուղու ընկերութիւնը ներկայ տարվայ գարնանը ձեռնարկելու է Սեւծովեան գծի շինութեան նախնական աշխատանքներին։ Արդ կառավարութիւնն իմաց է տուել այդ ընկերութեան վարչութեանը, որ՝ աչքի առաջ ունենալով նոր շինվելիք սեւծովեան գիծը, պետութեան, գանձարանը յատկացում է ընկերութեան երկաթուղիների գնումը մինչև 1910 թ-ի դեկտեմբերի 31-ը. պայմանի համաձայն՝ պետութիւնը պէտք է գնէր յիշեալ ընկերութեան գծերը 1903 թ-ի ընթացքում։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ ռուսական նաւատորմի զօրացման կոմիտէի գանձարանը փետրվար ամսի ընթացքում մուտք է ունեցել 2 միլիոն ռուբլի և համարեա նոյնքան էլ սպասվում է այն հիմնարկութիւններից, որոնց ծառայողները զոհել են իրանց ռոճիկներից որոշ %-ներ նոյն նպատակի համար։

—

«Русск. Инв.» լրագրում գեներալ-մայոր Պեշկովը գրել է մի յօդուած, որից երևում է, որ պատերազմի ժամանակ ծովափնեայ քաղաքների մէջ անմեղ մարդկանց աւելորդ զոհերից ազատելու համար կառավարութիւնը, հարկ պահանջած ժամանակը, կարող է ձեռնարկել հետևեալ միջոցները. 1) նախօրօք իմաց է տրվում բնակիչներին, թէ հաւանականութիւն կայ որ քաղաքը կը ռմբակոծվի թշնամու ձեռքով. 2) բնակիչների համար կընտրվի և ցոյց կըտրվի ռմբակոծութեան ժամանակ ամենաանվտանգ տեղերը. 3) քաղաքի մէջ կը կառուցվեն յատուկ պաշտպանված կէտեր, որոնց մէջ բնակիչները կարող լինէին պահվել և ռմբակոծութիւնից ազատվել։

—

«Нов. Вр.» լրագրին գրում են Մանջուրիայից, որ հարաւ-արևելեան Մանջուրիայում և Կվանտունում սկսվել են նաւթ որոնելու աշխատանքներ. նաւթ անպայման կայ։ Նախնական աշխատանքները տուին բաւարար հետևանքներ. յոյս կայ գտնել նաւթի ստորերկրեայ բաւական մեծ շերտեր։

—

Նոր-Բուխարայից մեզ գրում են. «Փետրվարի 28-ին, թւով եօթ հոգի իմերէլ-վրացիներ, լաւ զինված և դիմակաւորված, մտածում են կողոպտել ռուս-չինական առևտրական բանկը։ Յերեկվայ ժամը 3-ին նրանք մտնում են բանկը և վերաւորում են բանկի կառավարչին ու գանձապահին։ Այդ ժամանակ ծառաներից մէկը երկիւղից դէպի փողոց նայող պատուհանից իրան գլորում է ցած և ձեռքն ու ոտքը փշրում։ Փողոցում արդէն յայտնվում է եղելութիւնը և ամբոխը վրա է հասնում օգնելու։ Զարագործները տեսնելով, որ ոչինչ չը պէտք է տանեն, թողնում ու փախչում են։ Տեղիս քաղաքական գործակալի ձեռք առած միջոցների շնորհիւ այսրվում է ձերբակալել չարագործներին մի և նոյն օրվայ ժամի 7-ին։ Վիրաւորված ծառան երկրորդ օրը վախճանվում է տեղական հիւանդանոցում»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Մանջուրեան զօրք։ Բերլինի «Tageblatt» լրագիրը իբրև Թղթակից ուղարկել է Հեռաւոր Արևելք գերմանական մի գնդապետ, Գեսկէ անունով, որ առաջ ընդհանուր-շտաբի օֆիցէր էր։ Իր նամակի մէջ, որ նա գրել է Պետրոպավլովսկից, նա ասում է հետևեալը. «Ամեն բանից երևում է, որ մանջուրեան զօրքի կենտրոնացումը և կազմակերպութիւնը դեռ չէ կարելի վերջացած համարել այժմ, բայց ապրիլի սկիզբներին, զօրքը, իր գլխաւոր մասերով, բոլորովին պատրաստ կը լինի։ Յոյս ունեն, որ տաք օրերը հասան թէ չէ, ռուսաց զօրքը յարձակողական շարժում կըսկսէ։ Արդէն այժմ նկատվում է, որ արևելեան-սիբիրեան զօրքի ոյժերը ահեղ կը լինեն։ Միայն հետևակ զօրք արդէն 36 հրացանաձիգ գնդեր կան, որոնք շուտով չորս-բատալիոնեան կազմ կը ստանան։ Այդ արդէն 144 բատալիոն կը տայ. դրան պէտք է աւելացնել արևմտեան-սիբիրեան առաջին պահեստի դիվիզիան 16 բատալիոնով, որ այժմ արդէն գտնվում է Զաբայկալում և արևմտեան-սիբիրեան 2-րդ ու 3-րդ դիվիզիաները 32 բատալիոնով։ Ընդամենը, ուրեմն, 192 բատալիոն հետևակ, այն է մօտ 175,000 հոգի զօրք։ Այդ զօրքի մասին գնդապետ Գեսկէն մեծ գովասանքով է խօսում. ամենքը կորովի, առողջ, պնդակազմ, երիտասարդ և զուարթ մարդիկ են։ Բոլոր զրոյցները ճանապարհի տանջանքների մասին անհիմն են։ Երկաթուղու դրութիւնը գեղեցիկ է. ամեն տեղ տիրում է կատարեալ կարգ և հանդարտ գործնականութիւն։ Գնացքները մի քիչ ուշանում են, սակայն ուղևորների կամ զինուորական գնացքների կուտակումն չը կայ. շարժումը կատարվում է կանոնաւոր և անընդհատ, զինուորները հագած են տաք և վագոնները տաքացրած են։

Եապօնացիները Կորեայում։ Մարկիզ Իտօի գալուց յետոյ Կօրէայի կառավարութիւնը ամբողջովին անցել է եապօնացիների ձեռքը։ Գերմանական զինուորական շրջանները ենթադրում են, որ եապօնական զօրքը կը բաժանվի երեք մասի և կը ձգտի գրաւել գլխաւոր ռազմագիտական կէտերը Պօրտ-Արտուրի և Վլադիվոստոկի միջև։

Ռուսների շարժումը ուշանում է լաւ ուղեցոյցների պակասութեան պատճառով։ Նորերս ռուսները իբրև ուղեցոյց վերցրին հինգ կօրէացիներ, որոնք, իսկապէս, դուրս եկան ծպտեալ եապօնացի հետևակ զինուորներ։ Իմանալով եապօնացիների խորամանկութիւնը, ենթադրում են, որ ռուսները կը խաբվեն այդպիսի ուղեցոյցներից և հէնց առաջին պատերազմի ժամանակ եապօնացիները կը յարձակվեն ռուսաց զինուորների շորեր հագած։ Թարգմանված է բառացի եապօնական հետևեալ ոտանաւորը, որի մէջ ասված է. «Անաստուած սլամբեր, ոչ ոք ձեզ չէ խղճում։ Դուք վախկոտներ էիք չինացիների հետ կռուելիս, ձեր կօզակները կը չքանան, իբրև ձիւն, ծագող արեգակից։ Մենք կը գնանք Պօրտ-Արտուր, կը գնանք Ուրալ, կը վռնտենք սլամբերին մինչև Մոսկովի անտառները, որպէս զի ամեն տեղ իմանան մեր միկադօի փառքը»։ Այդպիսի ոտանաւորներ տարածվում էին Եապօնիայում պատերազմից առաջ, համապատասխան դաստիարակելով ժողովուրդը։ Ինչպէս հաղորդում են Թղթակիցները Տօկիօից, եւրոպական դիպլոմատիան իբր թէ բանակցութիւններ չէ վարում ամենևին այն մասին, թէ ինչպէս վերաբերվել Կօրէային, որ իրողապէս կորցրել է իր անկախութիւնը և համաձայնում է Ռուսաստանի կարծիքի հետ, թէ Կօրէան պատերազմ է վարում։» (Нов. Вр.)

Կորեան, Չինաստանը եւ Եապօնիան։ Բերլինի «Post» լրագրի Պարիզի Թղթակիցը հաստատում է, որ այժմ մարկիզ Իտօի բոլոր ջանքերը ուղղված են եղբայրական դաշնակցութիւն հաստատել Եապօնիայի, Չինաստանի և Կօրէայի մէջ։ Այդ դաշնակցութիւնը պէտք է ապահովէ բոլոր երեք երկիրների շահերը։ Եթէ մարկիզ Իտօի ջանքերը կաջողվեն, այդ դաշնակցութիւնը գուցէ հէնց այժմ իր ոյժի մէջ կը մտնէ։ Չինաստանը և Կօրէան անմիջապէս Եապօնիայի պաշտպան դուրս կը գան հէնց որ նրա վիճակը Ռուսաստանի հետ ունեցած պատերազմի մէջ կը վատթարանայ։ Չինաստանը այն ժամանակ կը հրաժարվի չէզոքութիւնից, իսկ Կօրէայի չէզոքութիւնը, արդէն, իրողապէս, գոյութիւն չունի։ (Рус. Вѣд.)

Անգլիական նաւերը պատերազմական մթերք են փոխադրում։ Բերլինի «Tageblatt» լրագիրը հաղորդում է, որ Անտվերպենում լուր է տարածվել, թէ իբր ռուսաց կառավարութիւնը վարձել է 20 անգլիական շոգենաւեր՝ երկաթուղային և պատերազմական մթերք փոխադրելու Պօրտ-Արտուր։ Շոգենաւերը իրանց բեռները կը բարձեն Անտվերպենում, Համբուրգում և Կարդիֆում։ Ապահովագրական պայմանագրի համաձայն, որ կնքված է Լօնդօնում, ամեն մի շոգենաւ իբր 1 միլիոն մարկով է վարձված։ Առաջին շոգենաւը պէտք է դուրս գայ ներկայ ամսի վերջին, ճացածներն էլ այն հաշուով, որ հասնեն ասիական ջրերը մայիսի վերջին։ (Русск. Вѣд.)

Ռուսաց նաւատորմերը։ Լօնդօնից հաղորդում են, թէ Կօրէից հեռագրում են, որ ռուսական նաւատորմը, փետրվարի 26-ի պատերազմից յետոյ, դուրս է եկել Պօրտ-Արտուրից, որպէս զի նորից փորձէ գնալ հասնել Վլադիվոստոկ։ Պատերազմական բոլոր նաւերը թողեցին նաւակայանը փետրվարի 27-ին, լուսածագին, բայց վերադարձան, երբ Պօրտ-Արտուրից բաւական մեծ տարածութեան վրա տեսան եապօնական նաւերին։ (Бирж. Вѣд.)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻ

11 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պաշտօնական լուրեր Հեռաւոր Արևելքից մարտի 10-ին չէ ստացվել։

ՏՕԿԻՕ («Բէյտէրի գործ.»)։ Մինիստր Նախագահ Կացուրա յայտնեց պատգամաւորների պալատին, որ մեծ պատիւ է համարում ժողովրդի ներկայացուցիչների հետ միասին պաշտպանել Միկադօի ազնիւ քաղաքականութիւնը, որ ուղղված է վերականգնելու երկրատեւ խաղաղութիւնը Հեռաւոր Արևելքում և ամրացնել պետութեան դրութիւնը, պահպանելով բարեկամական յարաբերութիւններ մեծ պետութիւնների հետ, ինչպէս և պահպանելով ազգի օրինական իրաւունքները։ Ապա Կացուրան արդարացրեց Եապօնիայի գործողութեան եղանակը Ռուսաստանի վերաբերմամբ։ Արտաքին գործերի մինիստր Կոմուրան ներկայացրեց պալատին Ռուսաստանի հետ ունեցած դիպլոմատիական գրագրութեան ամբողջ բնագիրը։

ՍԱՆՏ-ԵՍԳՕԴԷ-ՉԻԼԻ։ Նիւ-Եօրկի վաճառական Ֆլինտի այստեղի ներկայացուցիչը, որ ձեռք էր բերել վերջին չինա-եապօնական պատերազմի ժամանակ չիլիական կրեյսէրները, ծախելով նրանց ապա Եապօնիային, յայտնեց, որ Ֆլինտը գնել է երկու պատերազմական նաւեր «Կապիտանօ Պրատ» և «Շակաբուգ», այն պայմանով, որ պալատը թոյլատրէ և խոստացաւ չը ծախել նաւերը պատերազմող կողմերին։

ՀՌՕՄ։ «Մատինօ» լրագրի մէջ հրատարակված է այն Թղթակցի նամակը, որ իտալական «Էլբա» նաւի վրա ներկայ է եղել Զէմուլպօի մօտ եղած պատերազմին։ Թղթակիցը ասլիս է տրագիական դէպքի սրտաճմլիկ պատկերը և հռչակում է ռուս նաւաստիների արտասովոր հերոսութիւնը։ Երբ «Վարեագը» վերադարձաւ կռուից յետոյ Զէմուլպօի նաւակայանը, նրա տախտակամածը լի էր սպանվածներով և վիրաւորվածներով։ Ռուսական կրեյսերի վրա առաջին եկողը եղաւ իտալական լաժիշկը։ Զը կար և ոչ մի հոգի «Վարեագի» հերոսական պաշտօնեաներից, որ ՀԱՍՎԱԾ չը լիներ։ Նաւի պաշտպանողութիւնը՝ տիտանական էր։ Մի քանի վիրաւորներ ուղում էին իրանց հետ տանել նաւի մասնիկները, և արտասվելով թողնում էին նաւը։ Վերջում, թղթակիցը նրկարագրում է «Կօրէեցի» պայթիւնը և աւարտում է այս խօսքերով. «Մենք ականատես եղանք իսկական դիւցազներգութեան»։

ՄՈՒԿԴԷՆ։ Գլխաւոր կայան, մարտի 11-ին։ «Բէյտէրի գործակալութեան» հեռագիրները այն մասին, թէ եապօնացիները անցել են Տագունեան լեռնային անցքը, և կռիւ են բռնվել ռուսների հետ, ինչպէս և այն մասին, թէ եապօնացիների առաջ բաց է ճանապարհը՝ յարձակվելու Մօտիէվի լեռնային անցքի վրա, ուր իբր թէ գտնվում է ռուսաց մի զօրեղ զօրախումբ, այդ ամենը հնարովի լուրեր են։ Հնարովի են նոյնպէս եապօնական լրագիրներից «Դէյլի Տելեգրաֆի» քաղած լուրերը մարտի 6-ին Պօրտ-Արտուրի մօտ տեղի ունեցած կռուի և Սիոնչիոնի մօտ եղած ընդհարման մասին։ «Դէյլի Քրոնիկլ»-ի լուրը, թէ եապօնացիները անցել են Դաղունգօէն, հիմք չունի։ Գեներալ-մայոր Ֆլուգ»։

ԼԵՌՕԵԱՆ։ (Սեփ. Թղթակ.)։ Հաւաստի աղբիւրների ստացված տեղեկութիւնների համաձայն, Գեներալ Մա տեղափոխել է իր բանակատեղին Տունչիօու, իսկ նրա զօրքերը հեռացել են դէպի արևմուտք Սինինտինեան երկաթուղուց։ Ընդհանուր նահանգապետ Իւանշիկայ ապրում է Տեանցզինում. նրա զօրքերը յետ են դառնում Բաօդինֆու, նախկին բնակութեան տեղը։ Յամառ լուրեր են պատում, որ եապօնացիները ենթադրում են ափ իջնել Գացդեաօ, Շանդհայգուանօից դէպի հիւսիս։ Շատ եապօնացի լրտեսներ, ծպտեալ եապօնական զինուորներ գտնվում են Շանդհայգուանում և Ինկօուսսեան երկաթուղու վրա։ Գեներալ Միշչենկօի խումբը առաջվայ նման գտնվում է հիւսիսային Կօրէաում. նրա առաջապահ հետախոյզ խմբերը գտնվում են Անչժուի առաջ։ Ընդհարումներ եապօնացիների հետ վերջին օրերում չեն եղել։—Ստացվել են հեռագիրներ գեներալ Կուրոպատկինից նրա Զաբայկալ հասնելու մասին։ Գեներալ Լինեվիչը հեռագրել է գեներալ-ադիւտանտ Կուրոպատկինին. «Ողջունում եմ ձեր բարձր գերազանցութեան գալուստը՝ մանջուրական զօրքի տեղաւորման շրջանը։ Զօրքերը ծարաւի են հատուցումն տալ թշնամուն և անհամբերութեամբ սպասում են ձեր գալստեան՝ գործող զօրքի մէջ։ Հարաւային Մանջուրիայում ամեն բան խաղաղ է, Կօրէաում անդորրութիւն է. կօրէացիները գանգատվում են եապօնացիների բարբարոս վարմունքի մասին, որոնք կոպտաբար են վարվում Կօրէաի ժողովրդի հետ և հարստահարում նրան, շատ սակաւ անգամ են վճարում և խլում են ամեն մի կայք։

ՍՕՖԻԱ։ (Դիմադրական շրջաններից)։ Արժանահաւատ աղբիւրից դրականապէս հերքվում է այն տեղեկութիւնը, որ Սոֆիայի կաբինէտի և Բ. Դրան միջև բանակցութիւնները ընդհատված են իբր թէ բուլգարական կառավարութեան կողմից անդադար նոր պայմաններ առաջարկելու պատճառով. ընդհակառակը, կառավարութիւնը սկզբունքով պաշտպանում է արած առաջարկութիւնները, որ ընդունել է Թիւրքիան։ Ի նկատի ունենալով տենդէնցիոզ տեղեկութիւնները, որոնց նպատակն է առանց որ և է հիմքի մեղադրել Բուլգարիան, նոյնպէս ի նկատի ունենալով միւրցշտեգեան տեսակցութեան ժամանակ մշակված բէֆորմներ մրցնելու ձգձգումները Մակեդոնիայում, երկիւղ են կրում, որ այստեղ, Թիւրքաց իշխանութիւնների անբարեխղճութեան շնորհիւ, նոր բարդութիւններ կը սկսվեն Թիւրք-բուլգարական յարաբերութիւնների մէջ և վիլայէթների դրութեան մէջ Եւրոպական Թիւրքիայում։—Անգլիացի Մօգնի իր միջոցներով հիմնեց ապաստան մակեդոնական որբերի համար։ Ապաստանի հանդիսաւոր բացումը կը կայանայ մարտի 17-ին։

ՄՕՍԿՎԱ։ Հեռաւոր Արևելքի հետ առևտուր ունեցող մի ֆիրմա ուղարկեց այնտեղ բազմաթիւ էժանագին պատկերներ ներկայ պատերազմից առած դէպքերով՝ դրանց չինական ազգաբնակութեան մէջ տարածելու համար։

ԿՐՕՆՇՏԱԴՏ։ Դումման պատուաւոր քաղաքացի ընտրեց փոխ-ծովապետ Մակարովին։

ՋԻՏԱ։ 11 մարտի։ Անցան Մեծ Իշխան Բորիս Վլադիմիրովիչ մարտի 10-ին, իսկ այսօր՝ գեներալ Կուրոպատկին։ Պատգամաւորների ընդունելութիւնից հրաժարվեց։

ԲԵՐԼԻՆ։ Բայկալի վրայով զօրքերն անցնելու ժամանակ տեղեկութիւններ հաղորդելու համար ռուսաց կառավարութիւնը մի քանի շաբաթ առաջ պատուիրեց Տէլֆունկէն սիաեմի անթել հեռագրի ընկերութեան՝ կայարաններ անթել հեռագրական ծառայութեան համար. պատուիրած կայարանները ուղարկված են դէպի Բայկալ։

ՀՌՕՄ։ Գէնուայի «Կաֆֆրո» լրագիրը հրատարակեց մի նաւաստի նամակը «Էլբա» կրէյսերից։ Նամակի մէջ նկարագրվում է կռիւը Զէմուլպօի մօտ։ Նաւաստին մեծ ոգևորութեամբ է խօսում ռուսների հերոսութեան մասին և պատմում է, որ երբ «Կօրէեցը» օդը թռաւ, «Էլբայի» հրամանատարը հրամայեց վերջին պատիւները տալ թնդանօթաձգութեամբ։ Նաւաստին հեգնութեամբ է խօսում իտալական նաւաստիների եղբայրական զգացմունքների մասին դէպի կրէյսերների վրա ընդունված ռուսները, Նոյն լրագիրը տպեց մի ուրիշ մանրամասն նամակ, որի մէջ հեղինակը հիանում է ռուսների վրա. նա ասում է. «Հէնց որ «Էլբա» ընդունեց ռուս վիրաւորվածներին,

հրամանատարը կանչեց նաւի ծառայողներին և մի ճառ արտասանեց, որի մէջ գովաբանում էր ռուսներին նրանց հերոսութեան համար և հրաւիրում էր նաւաստիներին խնամք տանեն վիրաւորված ընկերների վրա»։ Նամակի մէջ հաղորդում է, որ իւրաքանչիւր իտալական նաւաստի խնամում էր մի վիրաւորվածին, այնպէս որ պառկում էր քնելու գետնի վրա, տալով իր մահճակալը վիրաւորվածին։ Իտալացիների և ռուսների միջև զուտ եղբայրական յարաբերութիւններ են հաստատվել։

ԿԱԼԿՈՒՏԱ։ Պաշտօնական տեղեկութիւնների համեմատ, աֆղանական էմիրը կատարելապէս առողջ է։

ՀՌՕՄ։ Մարտի 13-ին Թագաւորը կայցելէ Վիլհելմ կայսրին Նէապոլում։ Արտաքին գործերի մինիստրը կուղեկցէ Թագաւորին։

ՆԷԱՊՕԼ 11 մարտի։ Գերմանական կայսրը ժամանեց այսօր առաւօտեան և դիմաւորվեց թնդանօթաձգութեամբ իտալական էսկադրայից։

ՊԱՐԻԶ։ Պալատը ընդունեց միաբանութիւնների դատաստութեան արգելման օրէնքի երրորդ յօդուածը։ Այդ յօդուածը վերաբերում է միաբանական կրթական հաստատութիւնների փակման յետաձգման։

Կ. ՊՕԼԻՍ։ («Կօր. բիւրօ»)։ Դիակովի շրջականներում հաւաքված ալբանացիները մասամբ վերադարձան հայրենիք. Ճացածները նահանջեցին Թիւրքաց զօրքերի առաջ և պատնէշների եռև պատսպարվեցին։ Շաքիր փաշան բանակցութիւններ է վարում ալբանական պարագլուխ Սուլէյմանի հետ։ Սպասում են ապստամբվածների անձնատուր լինելը։ Շաքիր փաշան գտնվում է Բարուշում, իսկ Շամսի փաշան՝ Մօրինում։

12 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հեռաւոր Արևելքից մարտի 11-ին պաշտօնական տեղեկութիւններ չեն ստացված։

ԲԵՐԼԻՆ։ Կօրէայից ստացված տեղեկութիւններին նայելով՝ եապօնացիների դրաւած գաւառներում դժգոհութիւնները շարունակվում են, կենսական մթերքների պակասութեան պատճառով։

ՏՕԿԻՕ։ Պրինց Կանին մեկնեց Տօկիօից և ուղևորվեց Եւրոպա։ Եապօնական գլխաւոր շտաբը փոխադրվեց Կիոտո։

ԲԵՐԼԻՆ։ Եապօնական ինտենդանտային կառավարութիւնը բաժանմունքներ հիմնեց ամբողջ Կօրէայում։ Կօրէական կառավարութիւնն իր կողմից հրաման արձակեց, որ գիւղական ազգաբնակութիւնը բրինձ տայ եապօնացիներին։ Եապօնական օֆիցէրները քաղաքացու շորեր հագած, շրջում են բոլոր երկրում՝ մթերքներ գնելու. նրանք որոշեցին, որ ազգաբնակութիւնից կարելի է ձեռք բերել մթերք միայն 90,000 հոգու համար։ Ցինամպօից հաղորդում են, թէ եապօնական զօրքերի մէջ ճարակված է թոքերի բորբոքում և փորհարութիւն։ Հեծելազօրքի շատ ձիեր սատկեցին։

ՊԷԿԻՆ։ Չինական կառավարութիւնը թոյլ տուեց ռուսաց գործակալին՝ զօրահանդէս անել մանջուրական սահմանների գծով տեղաւորված չինական զօրքերին, այն պայմանով, որ նրան ուղեկցեն չինական օֆիցէրներ։

ԲԵՐԼԻՆ։ Ռուսաց կառավարութեան գործակալները բանակցութիւններ սկսեցին Գենուայում, Մարսէյլում և Նիցցայում՝ շոգենաւեր գնելու համար։ Ֆրանսիական շոգենաւային ընկերութիւնը առաջարկեց ծախել չորս մեծ շոգենաւ՝ 40 միլիոն ֆրանկով։

ՍՈՒԷՑ։ Զրանցքը մուտ գործեց «Մալայեա» շոգենաւը, որ գնում է Օդէսա. նրա վրա կան 6 օֆիցէր և 262 հասարակ նաւաստի, որոնց ազատեց անգլիական «Տալբօտ» կրէյսերը ռուսաց «Վարեագ» կրէյսէրի վրայից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ-ադիւտանտ Սախարով նշանակված է զինուորական մինիստր. Մեծ Իշխան Կիրիլ Վլադիմիրովիչ՝ Խաղաղ ովկիանոսի նաւատորմի հրամանատարի շտաբի զինուորական-ծովային բաժնի պետ։

ԲԵԼԳՐԱԴ։ Բօրիս Սարաֆով ուղևորվեց Մակեդոնիա։

ՍՕՖԻԱ։ (Ընդդիմադիր շրջաններից)։ Կ. Պօլսից ստացված տեղեկութիւններին նայելով՝ դեսպանութիւնները պնդում են իրանց պահանջների վրա։ Արտաքին գործերի մինիստրը այցելեց դեսպանութիւնները խնդրելու, որ պակասեցնվի եւրօպացի օֆիցէրների թիւը ժանդարմէրիայի մէջ և սահմանափակվի թիւրքական օֆիցէրներին արձակելու իրաւունքը։ Դեսպանութիւնները հասկացրին, որ ժանդարմէրիային վերաբերեալ պահանջները, որոնք հիմված են Միւրցշտեգի ծրագրի վրա՝ շատ չափաւոր են, և նրանց ընդունելութեան և գործադրութեան յապաղումը վնասակար է թիւրքերի շահերին։ Բացատրական զեկուցագրի մէջ դեսպանութիւնները պնդում են, որ ըէֆօրմները տարածվեն նաև Ալբանիայում, թիւրքական կառավարութեան լիակատար ազատութիւն տալով՝ այս գաւառը խաղաղացնելու գործում։ Նորից սաստկանում է ապըստամբութիւնը Ալբանիայում. շարժումը տարածվեց նաև Լիմայ կազայութեան մէջ, ուր նոր զօրքեր ուղարկվեցին։

ՊԵԿԻՆ։ Քաղաքում ընդհանուր յայտարարութիւններով աղդարարված է, որ բնակիչները օգնութիւն չը պէտք է ցոյց տան կուսող կողմերից և ոչ մէկին։

ԲԵՐԼԻՆ (Սեփական թղթակցից)։ Նակասակիից ստացված հեռագրի ասելով՝ եապօնական զինուորական մինիստրութիւնը մշակեց պատերազմի և Մանջուրիայի վրա յարձակվելու մանրամասն ծրագիր։ Զինուորական մեծ ոյժեր են նշանակված՝ Տումէնի գետաբերանից դէպի Խարբին արշաւելու համար։ Պէնեանից դէպի հիւսիս կազմակերպված են ուժեղ զօրասիւներ՝ Եալուի դէմ յարձակողական գործողութիւններ կատարելու համար։

ՏՕԿԻՕ («Բէյտ. գործ.»)։ Ադմիրալ Տոգո իր զեկուցման մէջ՝ Պօրտ-Արտուրի ծովային կռուի մասին հաղորդում է. «Մարտի 9-ին միացած նաւատորմը մանեվր էր անում։ Ականանաւերի երկու բաժիններ մարտի 7-ի գիշերվանից մինչև մարտի 9-ի առաւօտը Պօրտ-Արտուրի առաջն էին գտնվում, և թէպէտ ռուսների կողմից կրակի ենթարկվեցին, բայց ոչ մի վնաս չը կրեցին։ Առաւօտեան 8 ժամին Պօրտ-Արտուրի առաջ երևաց գլխաւոր նաւախումբը և հէնց նոյն օրը նաւատորմը ուղարկվեց Գոլուբինայա ծովածոցը։ «Ֆուշի» և «Եաշիմա» զրահակիրները վերաձիգ կրակ բացին ներքին նաւամատոյցի վրա։ Ռմբակոծութեան ժամանակ ռուսաց նաւերը դուրս եկան նաւահանգստից։ Երբ ժամի 2-ին վերաձիգ կրակը դադարեց՝ կարելի եղաւ տեսնել ռուսաց 5 զրահակիր և 4 ականանաւ։ Թշնամին նոյնպէս ռմբակոծում էր մեզ վերաձիգ կրակով։ Նրա ռումբերից շատերը ընկան «Ֆուշիի» մօտերը։ Մեր նաւերին ոչ մի վնաս չը պատահեց։ Ժամի 3-ին մենք հեռացանք նաւահանգստից»։

ՆԻԻ-ՉԺՈՒԱՆ («Բէյտ. գործ.»)։ Ռուս-չինական բանկի ծառայող Կլէնդլէր նշանակված է ֆրանսիական հիւպատոսական գործակալ Նիւ-Չժուանում։ Ռուսական պետական գոյքը նրան պէտք է յանձնվի։

—

Առեւտրական - հեռագրական գործակալութիւնից

11 մարտի

ՍԷՈՒԼ։ Եապօնական գլխաւոր զօրաբանակը, որ նշանակված է յարձակումն գործելու Մանջուրիայի վրա, արդէն կենտրոնացրված է և շուտով դուրս կը գայ Տումէն գետի բերանից դէպի Խարբին. միւս զօրքերը ճանապարհ են ընկել դէպի Եալու։

ՍԷՈՒԼԻՑ՝ Չիօն-Չժու շինվում է թեթև երկաթուղի։

Ցինամպօում գտնվող եապօնական պատերազմական նաւերը տեղեկութիւն են ստացել ռուսաց նաւատորմի դուրս գալու մասին Պօրտ-Արտուրից և դուրս եկան նաւահանգստից, որ միանան եապօնական էսկադրային։

Եապօնական նաւաստիների կարծիքով, Պօրտ-Արտուրը այնքան պաշտպանված է ականներով, որ նրանց մօտենալու փորձը՝ հաստատ կորուստ է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԻՒԺՕ ԳԻՆԻ
(Vin de Bugeaud)

Տօնիքական և սննդարար—քինքի նայի և կակաօի գինի։

—

Ֆրանսիական տօնիքական գինին առողջացնում է երեխաներին, կանանց, ծերերին և բոլոր թուլացածներին։

—

Գտնվում է Ռուսաստանի դեղատներում։

—

Ծախվում է մեծ քանակութեամբ P. Zebeault et C—ie 5, rue Bourg-l'Abbé, Paris.

(2·) 5—12

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Առաւօտեան դասախօսութիւն

Կիրակի, մարտի 14-ին, ցերեկվայ 12-½ ժամին, Արտիստական ընկերութեան թատրոնական դահլիճում գլխաւորապէս աշակերտների և աշակերտուհիների համար բժշկապետ Ֆ. Մ. Բլիումենտալը կը կարդայ ՎԵՐՋԻՆ հանրամատչելի դասախօսութիւն՝

«Թոքախտը, որպէս ժողովրդական հիւանդութիւն» թեմայի վրա։

Դասախօսութեան ժամանակ ցոյց կը տրվեն բազմաթիւ լուսաւոր պատկերներ։ (Խնդրվում է հետները բերել դիտակներ)։

Տոմսակները ծախվում են թատրոնի կասայում։ Տեղերի գները նոյնն են, ինչ որ ցերեկվայ ներկայացումների համար։

Սկիզբն է ցերեկվայ 12½ ժամին։

2· կ. 1—2

Բարձր դասակարգի կանայք ինչպէս և գեղեցկութեամբ ամենանշանաւոր դերասանուհիները հրաժարվեցին գործածել ԿՕՅԼԴ ԿՐԵՄ (Cold Creme), որ դառնահամ է և իւղալի տեսք է տալիս դէմքին։ Դրա տեղ նրանք գործ են ածում

CREME SIMON

(Կրեմ-Սիմոն) գեղեցիկ հոտ ունեցող արտադրութիւնը, որ երբէք չի փչանում և պնդացնող ու փափկացնող յատկութիւնների հետ միասին առաւելութիւն ունի պահպանելու դէմքի գոյնի շնորհաւորութիւնն ու երիտասարդական թարմութիւնը։

LA POUDRE SIMON

(Պուդր Սիմոն) La savon á la Creme Simon (Օճառ Սիմոնի) ունին նոյն հոտը և լրացնում են նրա զարմանալի յատկութիւնները J SIMON 59 Faubourg St. Martin Paris. Մաս-մաս վաճառվում է վարսավիրների, պարֆիւմերների և դեղագործների մօտ։

(Метцль) 2· 4—15

ՎԻՆՆԱՅԻ Կոֆէ Մէնդել սրճարանը յայտնում է, թէ աչքի առաջ ունենալով, որ այդ սրճարանը ծառայում է իբր կենտրոնատեղի օտար տեղերից եկած հայերի համար, այդ պատճառով նա ստանում է և «Մշակ» լրագիրը։

Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան Վարչութիւնը

Տեղեկացնում է իր անդամներին, որ մարտի 14-ին, կիրակի օրը, ժամը 12-ին, Ընկերութեան Կար ու ձևի դպրոցում, Դանուվոկի փողոց № 25, լինելու է տարեկան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Պատգամանքի առարկաներն են. 1) 1903 թ. Ընդհանուր Ժողովի արձանագրութիւնը. 2) Մատուցել մասնաժողովի տեղեկագիրը. 3) Վարչութեան 1902 թ. գործունէութեան հաշիւը. 4) Ընկերութեան գումարների համարատուութեան հաշիւը. 5) 1904 թ. նախահաշիւը. 6) Վարչութեան 3 անդամի և նրանց 2 անձնափոխանորդի ընտրութիւնը դուրս գնացողների տեղը. 7) Մատուցիչ մասնաժողովի 3 անդամի և նրանց 2 անձնափոխանորդի ընտրութիւնը, և 8) կար ու ձևի դպրոցի քնակարանը ընդարձակելու համար պահեստի դրամագլխից 3,000 ր. փոխառութեան հարցը։ Կողմնակի անձինք կարող են ներկայ լինել ընդհանուր ժողովին։ Նոյն օրը, առաւօտեան ժամը 10-ից սկսած կը լինի ձեռագործների վաճառումն։ (Ի.Հ.) 2—3

Հող

Են ուզում գնել 300—400 քառ. սաժէն Վերայում և Սօլոլակում։ Վերջնական գների մասին գրաւոր հաղորդել՝ Դպրոցական կօմիսիայի գործավարին Թիֆլիսի քաղաքային ուղղավայում (I բաժանմունք) մինչև ներկայ մարտի 20-ը։ (Չ. 2·) 3—3

ԲԺՇԿԱՊԵՏ

Գր. Տեր-Գրիգորեանց

ընդունում է հիւանդներին—ներքին (մասնաւորապէս կրծքի) և երեխայոց հիւանդութիւնների. 154. Միքայէլեան պրոսպէկտ, տելէֆոն 825. (ամեն օ.) 6—105

ԹԷՅԻ ԱՌԵՒՏՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Վ. ՎԻՍՕՑԿԻ ԵՎ ԸՆԿ.

ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

Մատակարարողներ տանն ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԻՇԽԱՆ ՄԻԽԱՅԻԼ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉԻ և Նորին Մեծութեան Պարսից Շահի

Հիմնական դրամագլուխ 6,000,000 ռուբլի։ Տարեկան շրջանառութիւն 20000000 ռուբլուց աւելի



Շնորհիւ մեր Թէյերի բարձր յատկութեան, առաւելապէս իրանց ուժեղ արօմատով, լաւ համով և թունդ գոյնով, մեր ֆիրման Մեր խանութներում, որոնք գտնվում են Մօսկվայում և ԵՒՐՕՊԱՅՈՒՄ բռնեց առաջնակարգ տեղերից մէկը մեր ծախած Թէյի քանակութեամբ։

Օդեսայում՝ մեր սեփական շինութիւններում, աշխատում է 1500 մարդուց աւելի։

Մեր ֆիրմայի թէյը գտնվում է Ռուսաց Պետութեան բոլոր մագազիններում։

Մեր Թէյն առնելու ժամանակ խնդրում ենք պ.պ. գնողների ուշադրութիւն դարձնել մեր առևտրական մարկայի՝ նաւի՝ ճշդութեան վրա, որ հաստատված է պետութիւնից, և պահանջել Վիսօցկու Թէյը՝ նաւով։

Վ. ՎԻՍՕՑԿԻ և ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գրասենեակը գտնվում է Մօսկվայում։

Բաժանմունքները.—Օդեսայում, Վարշավայում, Ռոստովում Դոնի վրա, Եկատերինբուրգում, Խարկովում, Թիֆլիսում, Ռիգայում, Վիլնայում, Սիմֆերօպոլում, Նիժեգորոդեան և Իրբիտսկի տօնավաճառներում։

Անդրկովկասի և Անդրկասպեան երկրների համար բաժանմունքը Թիֆլիսում գտնվում է Մէյդանում, Ժելէզնի բեադ, տելէֆոն № 32։

Ընկերութեան հացէն Մօսկվայում և բաժանմունքներում.—Թէյի առևտրի ընկերութիւն Վ. ՎԻՍՕՑԿԻ և Կ°.

Հեռագրների համար.—«ԿԱՐԱԲԼԻԿ»։

Թէյ ուղարկվում է Պարսկաստան տրանզիտով և այդ ժամանակ յետ է ստացվում մաքսը։ 11—20

Կենտրոնական Գրավաճառանոցում վաճառվում են հետևեալ նոր գրքերը՝

Անտոնեան Ա., Իտալիայում։ (Ուղևորի թռուցիկ տպաւորութիւններ), 29 պատկերով, Թիֆլիս, 1904 թ. գ. 1 ր. 50 կ.։
Աւգարատեան Ադ., Սուտ ճգնաւոր, վոդեվիլ 2 արար. ը. տպ, Թիֆլ. 1904 թ. գ. 20 կ.։
Բազ.—Աղաջանեան Գր., Լեգենդաներ—Գոտար, «Զէյ», Վերջին լարը, Սիրանարուած որդին, Մօր կաթը, Բազու, 1904 թ. գ. 5 կ.։
Դաւթեան Ա.ր. արեպս., Կանոնք ս. ժողովոց և Հարց եկեղեցւոյ, պր. ա., Թիֆլ. 1904, գ. 50 կ.։
Դիկմել Ֆելիքս, Ուղեղի նորոգումը, թարգ. օր. Նուարդ Աղանեան, Թիֆլ. 1904 թ., գ. 5 կ.։
Նապլեան Յար., Առաջին մուրացկանութիւնը (պատկեր), Թիֆլ. 1904 թ. գ. 8 կ.։
Էսպարբ Ժորժ, Ապուշը, ը. տիպ, թարգ. օր. Նուարդ Աղանեան, Թիֆլ. 1904 թ. գ. 5 կ.։
Թումանեան Յար., Մուսա, պատմական պօէմ, նուագ ը., Թիֆլ. 1904 թ. գ. 20 կ.։
Ֆան Ֆակ Ռուսօ, Էմիլ, (հայ թարգմանչի ընդարձակ առաջաբանով), գերմ. թարգմ. Իս. Յարութիւնեան, Թիֆլ. 1904 թ. գ. 50 կ.։
Լամեսթ Փիլ, Դիտութիւն, թարգմ. օր. Նուարդ Աղանեան, Թիֆլ. 1904 թ. գ. 5 կ.։
Խաչատրեան Խ., Եապօնիա, 1904 թ. գ. 3 կ.։
Հրատ. «Լումա» հանդիսի, Սև հացեր, ը. տիպ, թարգ. օր. Նուարդ Աղանեան, Թիֆլ. 1904 գ. 5 կ.։
Ղազարեան Գ., Կենդանիների վարակիչ հիւանդութիւններ և եղջիւրաւոր անասունների ժանտախտ, Թիֆլ. 1904 թ. գ. 8 կ.։
Յարութիւնեան Իս., 1500 տարի առաջ (404—1904) Հայոց տառերի գիւտը, Թիֆլ. 1904, 20 կ.։
Սօլոմեան Յովակ., Հաղարաւոր գծեր, առաջին պր., Պետր. 1903 թ. գ. 15 կ.։
Ֆուլդա Լուդ., Հերոսաթատրոն, ողբերգ. 5 գործ., թարգ. Տ. վ., Թիֆլ. 1904 թ. գ. 50 կ.։
Դիմել՝ Въ Тифлисъ, въ Центральную Книжную Торговлю. (Չ. 2· ե.) 2—3

Дозволено Цензурою. Тифлисъ, 12-го марта 1904 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» Типографія «ГЕРМЕСЪ» С. Назарянца, Мих. пр. № 81.